ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՏԻԱՐ ԿԵՅԴՋԻ ԻԴԵԻՆ

Մարտի 9-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ճապոնիայի լիազոր նախարար, Ռուսաստանի Դաշնությունում Ճապոնիայի դեսպանատան առաքելության ղեկավարի տեղակալ Կեյդզի Իդեին:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Հայաստանի եւ Ճապոնիայի միջեւ զարգացող համագործակցությանը տարբեր ոլորտներում: Իր խոսքում Նորին Սրբությունը ի դեմս նախարարի նաեւ երախտագիտություն հայտնեց Ճապոնիայի իշխանություններին եւ ժողովրդին՝ Հայաստանին ցուցաբերվող կարեւոր աջակցության համար:

Հանդիպմանը Ճապոնիայի լիազոր նախարարը Նորին Սրբությանը փոխանցեց Ճապոնիայի իշխանությունների եւ ժողովրդի շնորհակալությունը՝ անցյալ տարի Ճապոնիայում տեղի ունեցած երկրաշարժի օրերին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ հայ ժողովրդի ցուցաբերած սրտակցության եւ զորակցության համար:

Նախարարն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց նաեւ Ճապոնիայում կյանքի բնականոն ընթացքի վերականգնման եւ ողբերգության պատճառած վնասների հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվող աշխատանքները եւ ներկայիս իրավիճակը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԹՈՒՐ ՉԻԼԻՆԳԱՐՈՎԻՆ

Մարտի 10-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ, ՌԴ Դաշնային Ժողովի Դաշնության Խորհրդի անդամ Արթուր Չիլինգարովին:

Ողջունելով տիար Չիլինգարովի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց հայտնի գիտնականին ու քաղաքական գործչին՝ ընդգծելով, որ Հայոց Եկեղեցին բարձր է գնահատում նրա օգտաշատ ծառայությունն ազգային-եկեղեցական կյանքում: